ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մասով բավարարման, իսկ մյուս մասով քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ անհրաժեշտ ճափով պետական տուրքի գումարը վճարվել է, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագաձման 620.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ կարճված հայցապահանջի համար վճարված 2.536 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը ենթակա է վերադարձման Հայցվորին:

Ինչ վերաբերում է փաստաբանի խելամիտ վարձատրության գումարին, ապա նկատի ունենալով, որ հայցը մասով ենթակա է բավարարման, կարևորելով նաև քաղաքացիական գործի բարդությանն աստիճանն ու ներկայացուցչի կատարած աշխատանքը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորից ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 18.06.2024թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/125-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ «FDX Visionary RF Premium» ռենտգեն ախտորոշման համակարգն ընդունել պարտավորեցնելու, պահանջի մասին, բավարարել:

Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել ընդունել 18.06.2024թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/125-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ «FDX Visionary RF Premium» ռենտգեն ախտորոշման համակարգը:

Քաղաքացիական գործի վարույթը մնացած մասով, կարճել:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի բռնագանձել 620.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար և 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի վերադարձնել 2.536 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE41-A247-4EB6-B07E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am